Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՄԱՄՈՒԼԻ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ

ՄԻՔԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Անցած դարի 50—60-ական թվականները կարելի է համարել հայ մամուլի և հրապարակախոսության իրական լինելության համար մղված պայքարի, նրանց դերի ճիշտ ըմբռնման ու գործադրման տասնամյակներ։ Պայքարով է գոյատևել հայ մամուլը, հաճախ նույնիսկ ամեն մի պարբերական, պայքարով է նաև հայ առաջադիմական-դեմոկրատական մամուլը մտել իր դերի մեջ։

Այդ պայքարում իր որոշիչ դերն ունի հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը՝ ոչ միայն մամուլին բերած իր աշխատակցությամբ ու հրապարակախոսությամբ, որ մեր մամուլի պատմության պայծառագույն էջերն են կազմում, այլ նաև պարբերական մամուլի ու հրապարակախոսության խնդիրների ըմբռնմամբ և մեր իրականության մեջ նրանց իրավունքների հաստատման համար ծավալած գրեթե ամենօրյա պայքարով։ Տևական ու դժվարին պայքար էր այդ, որ զբաղեցրել է Նալբանդյանին իր կյանքի գրեթե ամբողջ ընթացքում։ Տակավին չհետազոտված այս հարցի լուսաբանումը շահեկանորեն կնպաստի Նալբանդյանի գործունեության առավել լրիվ ըմբռնմանը, նոր դիտակետից ելևան կհանի մեծ հրապարակախոսի հայացքները մամուլին և հրապարակախոսությանը ներկայացվող պահանջների ոլորտում, կընդգծի այն դերը, որ նա խաղացել է հայ պարբերական հրատարակությունների հասունության տարեշրջանում, այն ավանդների մշակման ու ամրապնդման գործում, որոնք ժառանգեց և զարգացրեց հայ առաջադիմական մամուլը հետագայում[1]։

Մամուլը Նալբանդյանի ուշադրության առանցքում է եղել հենց առաջին երկերը գրելու տարիներից։ Դեռևս ուսանողական նստարանին գրած հայտնի ճառում՝ «Յաղագս հայկական մատենագրութեան» մեջ, որ Նալբանդյանի հրապարակախոսական սկզբնաքայլն է, բավական տեղ տալով նաև պարբերական հրատարակություններին, նա փափագում էր՝ «երանի թէ ողջոյն օրագիրք մեր նովին ընթանային կանոնօք, դնելով առաջի Հայկական ազգին մարդուր ...զհոգեղէն կերակուրս»[2]։ Դրվատանք կամ դիտողություն հղելով այս

---

1 Թեմայի լուսաբանմանն առավելապես մոտեցել է Ա. Տերտերյանը «Միքայել Նալբանդյան։ Ազգության հրապարակախոսը» աշխատության մեջ, որ հրատարակվել է Ալեքսանդրապոլում, 1910 թ.։

2 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Երևան, 1947, էջ 44։ Այսուհետև սույն հրատարակությունից արվող մեջբերումները (հ. 1—4, Երևան, 1940—1949) տե՛ս տեքստում՝ փակագծերի մեջ նշվում են միայն հատորը և էջը։

կամ այն թերթի հասցեին, Նալբանդյանը զննում է «Բազմավեպ» և «Եվրոպա» պարբերականները, սուր ակնարկներ է նետում վերջինի և միսիոներական օրգան «Շտեմարան պիտանի գիտելեացի» մասին. «Եվրոպա» լրագիրը տարածում է «զանալի կարծիս և զդատողութիւնս Արեղայամիտ հեղինակացն», իսկ «Շտեմարանում» իսպառ բացակայում են «դատողութիւն այրական, իմաստ և կարծիք, գաղափարք կենդանիք և հայեցուածք յազգս ազգս գիտութեանց», այսինքն՝ հենց այն, ինչով «լուսափայլին միտք և սնանի հոգին» (հ. 2, էջ 46)։

Այս հարցադրումներում արդեն առկա է մամուլի գերի Նալբանդյանական նախաբմբռնումը։ Ավելին. հենց այստեղ էլ նա առաջ է քաշում հայ հրապարակախոսության արմատական խնդիրը՝ «աղեղունք լարեալ վանել և խորտակել զամենայն նենգ և մանդ ոչխարազգեստից», բացահայտել «հայկական ողորմ տգիտութիւնը... քաղցկեղ, որ ճարակէ և զառողջ մարմին ազգին»։ Կոնկրետ առիթով այսպիսի խնդիր առաջադրելով, ինքը Նալբանդյանը եղավ այդ խնդրի իրագործման համար առավել մեծ եռանդով պայքարող հրապարակախոսը և հյուսիսափայլյան մարտադաշտի քաջաբար մարտնչողը։

Լինելով հայ կյանքի և իրականության հարազատ ծնունդը, Նալբանդյանը դարձավ այդ իրականության բազմակողմանի և համայնապարփակ արտահայտիչը՝ նախ և առաջ հանդես գալով իբրև հրապարակախոս, որ գրում է իր ժամանակի պատմությունը՝ ասպարեզ ունենալով մամուլը՝ իրօրյա հայ մատենագրության անբաժանելի ճյուղը։

50-ական թվականների սկզբին այդ մամուլը դեռևս սաղմնային վիճակում էր, և հասարակական լայն կյանքի ասպարեզում նոր-նոր ոտք դնող Նալբանդյանը լավ էր ըմբռնում այդ։ Դրա համար էլ նա իր առաջին հրապարակային խոսքում շտապում էր գրվատել Զմյուռնիայում հրատարակվող «Արշալույս արարատյան» (սխալմամբ անվանելով «Ազգասեր») և Կ. Պոլսում լույս տեսնող «Նոյան աղավնի» և «Մասիս», ինչպես և «գիտնական հայրենակից» Մ. Թաղիադյանի հեղինակած «Ազգասեր» թերթերը։ Դրանով հանդերձ նա տեսնում էր, որ ասպարեզը խոպան է, ըմբռնում էր, որ հայ մատենագրության, հետևապես նաև մամուլի «մեջ կյանք և կենդանություն» չկա։ Անհրաժեշտ էր, ինչպես գրում է նա, ստեղծել «զանազան լուսավոր գաղափարներով հարուստ շարունակ օրագրություններ», որոնք հասկանալի լինեն ժողովրդին, ունենան ինքնուրույնություն և հենվեն կայուն սկզբունքների վրա։

Ըմբռնումն այն բանի, որ հայոց կյանքը միանգամայն անապատացած է, Նալբանդյանին բերեց հրապարակագրության ասպարեզը. «Երկար ժամանակ է,— գրել է նա 1856 թ. մարտին,— որ ես և պարոն Նազարյանցն ցանկանում էինք դուրս տալ մի հայկական օրագիր, աշխարհաբառ լեզվով հասարակին հասկանալի» (հ. 4, էջ 38)։ Տակավին ուսանողական նստարանից լծվելով նոր պարբերականի ստեղծման գործին, նոր՝ նախ և առաջ իր էությամբ, և հանդես գալով իբրև նրա գլխավոր գործակիցը, Նալբանդյանը գիտակցում էր, որ նոր պարբերականն ուղղված է լինելու «հնամոլ մարգերի» դեմ, որ այն լինելու է ապացույց՝ «թե ժողովուրդը փոքր ի շատե, ճանաչել է ժամանակի իրավունքը»։ «Մեր ցանկությունը այն է,— շարունակում է Նալբանդյանը մտերմական նամակում,— որ կարողանանք ժողովրդին մո-

տեցնել փոքր ինչ դպրության հետ, նյութ և սնունդ դնել հայկական չոր ու ցամաք դպրության մեջ, և ինչպես մի կողմից լեզուն, մյուս կողմից և նույն ինքյան դպրության հոգին և ուղղությունը որքան կարելի է շինենք ժողովրդական, ազատելով աբեղայականությունից, որի մեջ մնացած է այժմ անտեր անտերունչ» (հ. 4, էջ 39—40)։

Այսպիսի նախասկզբունքով ոտք դնելով մամուլի ասպարեզը, Նալբանդյանը իր տաղանդն ամբողջապես ի սպաս դրեց «հայկական օրագրին»՝ «Հյուսիսափայլին», որ արևելահայ իրականության մեջ սկզբնավորեց նոր՝ ժողովրդական-դեմոկրատական մամուլը, մարտական-հարձակողական հրապարակախոսությունը՝ գլխավորապես հենց Նալբանդյանի աշխատակցության շնորհիվ։

Իր գործունեությամբ «Հյուսիսափայլը», իսկ Նալբանդյանն իր հրապարակախոսությամբ փաստորեն ուրվագծեցին այն մայրուղին, որով ընթացան հայ առաջադիմական-դեմոկրատական մամուլը և հրապարակախոսները գրեթե մի ամբողջ հիսնամյակ։ Նրա էջերում հրատարակած իր երկերով ու հոդվածներով, նրա գոյատևման և առաջադրած սկզբունքների համար մղած տևական պայքարով Նալբանդյանը միաժամանակ մշակում էր այն հիմնարարական տեսակետները, որոնք պետք է դրվեին հայ մամուլի և հրապարակախոսության հիմքում։ Ամենատարբեր առիթներով և զանազան ժանրերով գրած իր նյութերում, սկսած նրա հրապարակախոսական ամենից ծավալուն երկից՝ «Հիշատակարանից», մինչև Գևորգ Գեղամյանցի մահախոսականին կցած ծանոթագրությունը կամ բանտախցից գրած նամակները, Նալբանդյանը հետևողականորեն արծարծում էր մամուլի դրվածքի հարցերը, կարծիքներ հայտնում թերթերի ու ամսագրերի խնդիրների շուրջը, քննում հրապարակախոսության և հրապարակախոսի գործունեության ելակետային ըմբռնումները։ Նրա արտահայտած գաղափարների մեկտեղումը լիակատար պատկերացում է տալիս, թե ինչպիսի դեր էր հատկանշում հայ ականավոր հրապարակախոսը, հեղափոխական-դեմոկրատ գործիչը հայ մամուլին ու հրապարակախոսությանն իր ժողովրդի պատմության մեջ ու ճակատագրի խնդրում։

Հայտնի է, որ հետադիմական մամուլը և նրա խմբագիր-հրապարակագիրները, ինչպես ի սկզբանե կանխատեսում էր Նալբանդյանը, ծառացան «Հյուսիսափայլի» ու նրա գլխավոր աշխատակցի դեմ։ Հակահարված տալով նրանց, պարբերաբար հանդես գալով ընդդեմ «Մեղու Հայաստանի», մխիթարյան մամուլի, «Ծերևակի» ու Հովհ. Ջամուռճյանի, «Ճռաքաղի» ու Մսերյանների, ինչպես նաև մի շարք այլ պարբերականների, Նալբանդյանը կոնկրետ նպատակներ հետապնդելով հանդերձ պաշտպանում էր մամուլի և ժուռնալիստի իրավունքը, պարզաբանում ու հիմնավորում նրանց դերը, առաջ քաշում սկզբունքներ։ Դրանք թելադրված էին առաջադիմական-դեմոկրատական մամուլի և առաջին հերթին ռուսական մամուլի նվաճումներով, ինչպես և այն փորձով, որ մատուցել էին հայ մամուլը, մասնավորապես Հընդկաստանում Մ. Թաղիադյանի հրատարակած «Աղգասեր» և «Աղգասեր արարատյան» (1845—1851) թերթերը և Փարիզում լույս ընծայված Ստ. Ոսկանյանի «Արևելք» (1855—1856) ու «Արևմուտք» (1859, 1864—1865) հանդեսները, ինչպես և Հ. Սրվանձյանի «Մեղուն» (1856-ից)։

Ինչպես ժամանակաշրջանն էր թելադրում, Նալբանդյանը ամենից առաջ և ամենից շատ ուշադրություն էր հրավիրում մամուլի լեզվի վրա, որպես ընթերցողին հասկանալի լինելու պայման։ Մինչև իր կյանքի վերջին օրերը զբաղվելով լեզվի հարցերով և մեծ ավանդ բերելով աշխարհաբարի հաստատմանն ու մշակմանը, նա պարբերական հրատարակության որոշիչ հատկանիշը համարում էր լեզվի հասկանալիությունը «հասարակին»՝ ժողովրդին, որի օգտին պիտի ծառայի ամեն մի պարբերական։ «Հասարակաց լեզվով» մամուլը կոչված է գիտությունը հասցնել հասարակ մարդկանց և կամուրջ լինել դեպի լուսավորությունը տանող ճանապարհին։ Ազդարարելով այդ մասին, նա ռուսական «Մոլվա» թերթում 1857-ի վերջերին հրատարակած նամակում պատշաճն է հատուցում «Հյուսիսափայլի» ապագա խմբագիր-հրապարակախոսին, որն առաջինը «հասկացավ հայերին միջնադարյան կապանքներից ազատելու անհրաժեշտությունը և, նկատի ունենալով ժողովրդի ժամանակակից կենսական պահանջները, ազդարարեց հայկական կենդանի խոսքի իրավունքն իբրև հայի մտքի և զգացմունքների արտահայտության բնական միջոց, իբրև գիտության, լուսավորության առաջմղիչ արմատական պայմաններից մեկը»[3]։

Լեզուն միայն միջոց էր. առավել կարևոր էր նպատակը։ Հենց «Հյուսիսափայլի» երկրորդ համարում Նալբանդյանը հռչակեց մի կարևոր սկզբունք. «Մեք որպես ուսումն և խրատ ամեններիս համար, պարտական ենք տեղեկանալ մեր բարոյական ցավերին ու խոցերին, և այդպես վեր քաշել մի վարագույր, որի տակ ամենայն զգուշությամբ աշխատում էին տգետ մարդիկ թագուցանել ճշմարտությունը» (հ. 2, էջ 151)։ Դա ժամանակի մեծ լոզունգն էր՝ պատռել այն վարագույրը, որի տակ թաքնված է ճշմարտությունը։ Նրան հայտնի էր, որ «նեղսիրտ, պղտոր տեսությամբ պարոնները» բամբասելու են, դատաստանի են կանչելու, բայց մեկընդմիշտ զինվորագրվելով ճշմարտությանը, նա մի ամբողջ տասնամյակ մնաց նրա աներեր ռազմիկը. Նալբանդյանի գրչին պատկանող գրեթե բոլոր գործերը, ներառյալ նաև անձնական նամակները, դրոշ են պարզված հանուն ճշմարտության՝ ընդդեմ կեղծիքի ու բոլոր գույների վարագույրների։ 1858 թ. ապրիլին «Հյուսիսափայլին» սեփական ստորագրությամբ հղած նամակում, ապա և «Հիշատակարանի» 5-րդ հատվածում նա ցույց է տալիս, որ մարդկության պատմության բոլոր դարերում էլ ընդդիմության ու հակառակության են հանդիպել «հանճարեղ մարդերի լուսավոր մտածությունք և քարոզությունք», չի եղել որևէ ժամանակ, որ «տգիտությունը և խավարը ոսոխ եղած չլինին ճշմարտության լուսի ընդդեմ»։ Միշտ է ճշմարտությունը պատերազմով հաղթել և «նա է մարդը, որ արհամարհելով ամենայն ունայնություն, կտրիճի պես կանցանե այն նեղ ու փշոտ ճանապարհից, դիմելու համար դեպի ճշմարտության կենդանարար աղբյուրը» (հ. 1, էջ 357)։

Ճշմարտություն և պատերազմ։ Լայն ու խորիմաստ է դրանց Նալբանդյանական ըմբռնումը։ «Աստվածային ճշմարտության» համար, «հայի առաքուր կոխված իրավունքը» վերականգնելու և պաշտպանելու համար՝ «ոչ միայն բանիվ և գրչով, այլ և զենքով և արյունով» մարտնչելը համարելով յուրաքանչյուր կանոնավոր մարդու առաջին պարտքը, իսկ մամուլը դիտելով իբրև հանուն դրա մղվող պատերազմի միջոց և ասպարեզ, Նալբանդյանն ա-

3 ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., 1954, № 5, էջ 80։

ռաջ է, քաշել և բազմակողմանիորեն զարգացրել ու հիմնավորել ճշմարտությունը երևան հանելու և «սուրբ պատերազմ» մղելու այն մեծ սկզբունքները, որոնք տևական կենսունակություն ունեցան և այսօր էլ չեն հնացել։

«Հիշատակարանի» հենց առաջին էջերում Նալբանդյանը հռչակեց. «Ինչո՞ւ փախչենք լույսի տակ քննելուց մեր ազգային գործերը, ինչո՞ւ սիրենք խավարի վարագուրով ծածկել մեր վերքերը, որոնք այսքան տարիներ թաքուն մնալով բժիշկներից, կարոտ են այժմ մեծամեծ վիրաբուժական հնարների։ Այնպես է, մեր քարոզած ճշմարտությունը գուցե թե կտրատում է ազգի սիրտը, բայց այդ սուրը միակ հնար է փտած և ճարակած խոցը առողջ մասներից բաժանելու և հեռացնելու համար» (հ. 1, էջ 306—307)։ Ճշմարտության վերհանումը, այլ կերպ ասած մամուլում ազգային պակասությունների բացահայտումը, նպատակ ունի ոչ թե պախարտկել ազգը, չարախնդությամբ նրան անարգել, ինչպես ամենուր բարբաջում էին հակառակորդները, այլ հետապնդում է նրա խոցերը վիրահատությամբ բուժելու մեծ ու հայրենասիրական խնդիր։ «Այդ պակասությունքը,— գրում է Կոմս Էմմանուիլը,— ծակում են իմ սիրտը, և շատ արտասուքի պատճառ են դառնում... ինչ-որ խոսում եմ, խոսում եմ որպես պաշտոնյա ճշմարտության», իսկ «ճշմարտությունը հասարակաց սեպհականություն է»։ Բացահայտելով ճշմարտությունը, մամուլը և հրապարակախոսը, ինչպես խորապես համոզված էր Մ. Նալբանդյանը, օգնում էին, որ «ազգի սրտացավ անգամքը» ուղի որոնեն, բուժեն վերքերը։ «Արյուն է կաթում մեր սրտից, երբ նայում ենք ազգի ամայի և ամուլ կյանքի վերա»,— գրում էր նա (հ. 3, էջ 29) և բանաձևում՝ «Այլ է ազգը, և այլ է ազգի պակասությունքը» (հ. 1, էջ 373)։ Հետևապես,— գրում է Նալբանդյանն այնուհետև,— «ամենայն բանիմաց և ճշմարտասեր հայի վերա պարտականություն կա պատժել և պատուհասել բերանով և գրչով ազգի պակասությունքը...» (հ. 1, էջ 315)։ Ահա ինչու նա ազդարարում էր, որ իր պարզած դրոշի վրա գրված է հրեղեն տառերով «ճշմարտություն»։

Սկզբունքային կարևոր նշանակություն ուներ Նալբանդյանի «Նկատողությունք» վերնագրով հոդվածը, որ հրատարակվել է «Հյուսիսափայլի» 1858 թ. 10-րդ համարում՝ իր իսկ ստորագրությամբ (հ. 2, էջ 254—264)։ Այստեղ նա ի դեմս «Հյուսիսափայլի» հիմնավորում է մամուլի իրավունքը և նրա «խորհուրդը մատենագրական ասպարեզում», զարգացնում է այն հիմնարարական դրույթը, որ Նալբանդյանի հրապարակախոսության անփոփոխ նշանաբանն էր։ Ազգային լրագրերն ու օրագրերը, արձանագրում է Նալբանդյանը, չեն կատարում իրենց խնդիրը, իրենց էջերը լցնում են «այնպիսի բաներով, որ կապակցություն չունեին մեր ազգի ներկա հարկավորությունների և օգուտների հետ»։ Նախախնամությունը «հայկական անմխիթար անապատի մեջ» «ծանր, բայց... քաղցր լուծ» է դրել «Հյուսիսափայլի» վրա։ Ազգը ինքնամոռացության մեջ է և գնում է դեպի «հավիտենական անդունդ»։ Ահա ինչու «Հյուսիսափայլի» շուրջը համախմբված հրապարակախոսները «բարձրացնում են ճշմարտության դրոշակը՝... հրավիրելով դեպի արթնություն, հսկողություն և գործունեություն... Հյուսիսափայլը,— համարձակ Հյուսիսափայլը... ճեղքում է, պատռում է մի հազար կարկատաններով թանձրացուցած վարագույր, որի տակ ամենայն խնամքով թաքուցած էին խավարապաշտները մեր ազգի բարոյական խոցերը և վերքերը»։ Դա է մամուլի, ամեն մի պարբերականի, յուրաքանչյուր հրապարակախոսի խնդիրը. «Ա-

ոանց այսպիսի խնդիրների մոտենալու օրագիրը կյանք չունի, այս կենդանի և շարժուն խնդիրները հոգի են մի օրագիր ասացյալ մատենագրական գործունեության»։ Մամուլի աշխատակիցներից նրանք են միայն արժանի բարոյական վարձատրության, ովքեր «ամենայն բան զոհ բերելով ճշմարտության, ընթացք էին տալիս այս խնդիրներին»։ Մարդկության վիճակի բարվոքմանը նպաստող խնդիրներ բարձրացնելով և դրանց լուծումով մամուլում ձեռք են բերվում «ավելի մեծ հաղթություն, քան թե պատերազմի դաշտումը» (հ. 2, էջ 254, 255, 256)։

Նալբանդյանն իր արծարծած գաղափարները հիմնավորելու և «խավարապաշտների բամբասանքին» կանխապես հակահարված տալու համար անդրադառնում է ազգի ցիրուցան վիճակին, ազգ հասկացությանը, նրա միասնությանը, մասնավորապես շեշտում այն «հարակցությունը», «անընդհատ ե կենդանի կապակցությունը», որ պիտի հաստատվի ազգի գրագետ մասի և հասարակ ժողովրդի՝ «հեղինակի և ընթերցողի մեջ»։ Այս դեպքում՝ «մինը—խելացի կերպով տալով, իսկ մյուսը—խելացի կերպով ընդունելով», գլուխ է գալիս հասարակաց գործը։ Ինչ վերաբերում է ազգին, ասա «ազգը պիտո է ուննա ազգություն», որովհետե «մի ազգի սեպհական ազգությունը հնար է տալիս նորան հասկանալ ուրիշ ազգությունք, և ուրիշ ազգությունները հասկանալով և գնահատելով չքանում է մի ազգության եսական, ֆանատիկոս և անմարդի բնավորությունը։ Որ տեղում չքանում է ազգությունը, այնտեղ չքանում է նյութապես կամ բարոյապես և ինքը ազգը... Ոչ մի ազգություն իրավունք չունի կուլ տալու և ոչնչացնելու մի ուրիշ ազգություն... Արդարությունը պահանջում է խոստովանել ամենայն ազգություն... Թո՛ղ ամենայն ազգ պահպանե յուր ազգության կերպարանքը. թո՛ղ ազատ և պայծառ ծաղկի ամենայն ազգություն մարդկեղեն աշխարհի մեջ» (հ. 2, էջ 258—259)։

Այս սկզբունքից էլ բխում էր Նալբանդյանի պահանջը մամուլից ու հրապարակախոսից՝ ազգի առջև դնել նրա անցյալը և ներկան՝ «եփած կրիտիկայի կրակով», նրա կոչը՝ առաջ բերել «միաբան և խելացի շարժողություն», «մտավորական պատերազմ»։ «Մեր ազգի մեջ այժմ կան հայացքներ, կան ուղղություն, կան ուրեմն և դրոշակներ, կա պատերազմ... Պատերազմը հետևանք է շարժողության, իսկ շարժողությունը— կյանք է»,— գրել է Նալբանդյանը՝ դիպուկ կերպով բնութագրելով իր ժամանակի հայ հասարակական մտքի պատկերը։ Պետք չէ որևէ խաղաղություն, «ամենայն հաշտություն և միավորություն» մերժելի են՝ մանավանդ որ դրանք ձեռք են բերվում զիջողությամբ. «Ո՛չ. թո՛ղ յուրաքանչյուր կողմը առանց բռնադատական զոհաբերության, և առանց ամենայն բռնադատական կամակորության գործ դնե յուր բոլոր զորությունը, յուր մտքերի բոլոր խորությունը, այդ ժամանակ միայն կարող է հայտնվիլ կատարյալ և վճռական հաղթությունը. պատերազմը այն ժամանակ կարող է հասնել յուր պայծառ և պտղավետ նպատակին.. Գինին մինչև չխմորվի և չպղտորվի, չէ պարզվում» (հ. 2, էջ 262, 263)։

«Օրհնյա՜լ է պատերազմը, թո՛ղ լինի նա հզոր, անխնա, ազնիվ և բարեխիղճ»,— այս էր Նալբանդյանի պարզած դրոշը հայ մամուլի և հրապարակախոսության «ռազմադաշտում», որտեղ նա և մարտիկ էր, և զորահրամանատար՝ ստրատեգիական իր ծրագրով՝ լուսավորության տարածմամբ հասնել այն բանին, որ «մարդու մեջ կատարվի մի հեղափոխություն—վերա-

ծնելություն», որ նրա հունդերը «շարժողություն պատճառեին հողի մեջ և ստուղ տային» (հ. 2, էջ 264)։ Նա քաջ գիտեր, որ «նորը պատերազմով պիտի կանգնեցներ իր գրոշակը հնության ավերակների վերա» (հ. 3, էջ 15)։

Այսպիսով, մամուլը Նալբանդյանի ըմբռնմամբ այն կամուրջն է, որ ժողովրդին տանում է դեպի լուսավորություն, այն սուրը, որ պատռում է խավարի վարագույրը և «անկաշառ ճշմարտապաշտությամբ» մարտնչում ճշմարտության համար, հարուցում է «մտավոր պատերազմ» ու ցանում հունդեր, որոնք պետք է ծլեն, պտուղ տան և գաղափարական հեղափոխություն առաջացնեն։ Մամուլի դերի այսպիսի ըմբռնումը, որ եզակի է դարակիսի մեր իրականության մեջ, չի սպառում, սակայն, այն խնդիրները, որոնք Նալբանդյանը շաղկապում էր նրա հետ։ Կարծես լրացնելով իր միտքը, «Հյուսիսափայլի» հենց հաջորդ՝ 11-րդ համարում նա դարձյալ իր ստորագրությամբ հրատարակեց «Նամակ առ հրատարակողը» խորագրով հոդվածը (հ. 2, էջ 265—273), որտեղ ծառանալով «հանցանքը առաքինություն քարոզելու» դեմ, մատնացույց է անում հայի իրավազրկությունն ու հալածական վիճակը և դրա պատճառներից մեկն էլ բացատրում «մինչև այսօր մեր ազգի մեջ հրապարակախոս բերան չլինելով»։

Մեծ աղմուկ հանած այդ հոդվածում Նալբանդյանն աներկյուղ գրչով արձանագրել է, որ «ամենայն տեսակ վատթարություն, անկարգություն» մնում են անպատիժ, չեն ընկնում «գրչի դատապարտության տակ», որ հարուստը և իշխանություն ունեցողը, թեկուզ ոճրագործ, անդատապարտելի են, նույնիսկ ազգասերի անուն են վաստակում. հասարակության լռությունը և ստրկամտությունը՝ ոգևորում և ուժ է տալիս «հայակերպ և գիշերադեմ վամպիրներին»։ «Հյուսիսափայլի» երևան գալով, սակայն, նոր հնարավորություն է բացվել. «Բայց պիտո է մի օր դուրս գալ այս խավար դրության միջից, պիտո է ճանապարհ տալ հրապարակախոսությանը և մեր ազգի մեջ։ Փառք աստծո, կա այժմ մեր մեջ մի հասարակաց բերան—«Հյուսիսափայլը»:

Մամուլը դիտելով իբրև «հասարակաց բերան», Նալբանդյանը տեղնուտեղն էլ սահմանում է իրօրյա հրապարակախոսության վեհ խնդիրները, որ պետք է իրագործի հենց «Հյուսիսափայլը»՝ դառնալով «հրապարակական դատաստան», բուն հրապարակախոսության ասպարեզ։ Նալբանդյանը գրում է. «Թող նա կատարե այդ պաշտոնը, թող նա լցուցանե յուր վեհ կոչման պարտքը, լինելու ազգային դաստիարակության սպասավոր. թող իսուսե նա անդադար, թող բարձր ձայնով քարոզե նա և լավը և վատը... Թո՛ղ վերջապես ազնիվ սրտերը, որ գտնվում են հայոց ազգի մեջ, մի փոքր մխիթարվին տեսանելով վատթարության դատապարտվիլը բանականության ատենի առջև։ Թո՛ղ և չարագործ և եղեռնագործ մարդիկ զգաստանան տեսանելով, որ մի անմերժելի ձայն հետևում է նոցա քամակից, մտանում է նոցա հետ նոցա ամենածածուկ խորհուրդների մեջ և նոցա միմյանց ականջին խոսածը քարոզում է տանիքների վերա։ Դարձյալ փառք աստծո, որ մեր ազգի մեջ գտնվեցան այնքան ազնիվ մարդիկ, որ ցանկացան մի հասարակաց բերան ունենալ ազգի համար, մի հրապարակական դատաստան... Մենք երջանիկ ենք քան թե մեր հարքը և պապերը....»։

Կոնկրետ նշելով «նվիրական» «Հյուսիսափայլի» և նրա հրապարակախոսության խնդիրները, Նալբանդյանը մեծապես ընդարձակում էր մամուլի

իրավասության շրջանակները, նրան օժտում հասարակական ատյանի իրավունքով։ Դա չէր հարմարվում այն կաղապարին, որի մեջ մինչև այդ դրված էր հայ հասարակությունը և նրա մամուլը։ Եվ իզուր չէ, որ հետագա մամուլը՝ մասնավորապես «Մեղու Հայաստանին», բազմապատկված ջանքերով հանդես եկավ Նալբանդյանի այդ հոդվածի, «Հյուսիսափայլի» և հենց իր՝ Նալբանդյանի դեմ։ Իզուր չէր նաև, որ էջմիածինը իրար խառնվեց ու գործը հասավ մինչև ցարական երրորդ բաժանմունք։ Ինչպես և իզուր չէր, որ «Նամակը» անմիջապես արտատպվեց Ստ. Ոսկանյանի «Արևմուտքում»՝ ստանալով համահայկական հնչեղություն ու պաշտպանություն։ Հայ մամուլը և հրապարակախոսությունը իրենց դերի նալբանդյանական ըմբռնմամբ թոթափում էին այն զսպաշապիկը, որ կաղապարել էր նրանց, թևերը գամել, միտքը տոչորել։

Մ. Նալբանդյանի մեծությունը, անշուշտ, իր առաջ քաշած գաղափարների, իր ընդհանուր գաղափարախոսության մեջ է։ Բայց նա նույնքան հզոր է նաև իր առաջադրած սկզբունքների հետևողական կիրառմամբ ու մարտական պաշտպանությամբ, որի գագաթնակետը եղավ անզերազանցելի «Երկու տողը» (հ. 3, էջ 15—37)՝ շռնդալի իր պաթոսով և անխոցելի մարտունակությամբ։ «Հյուսիսափայլից» հետո նա իր հզոր պաշտպանությամբ ամրապինդ հենարան է ծառայել Հ. Սրվանձյանի «Մեղուին»՝ արևմտահայ դեմոկրատիայի մարտական օրգանին։ Հայտնի են Նալբանդյանի բազում անդրադարձները «երիտասարդների և կենդանի ժողովրդի մաքուր բերանին», որոնք ցրված են նրա մի շարք երկերում և հատուկ այդ նպատակով գրված հոդվածներում, մասնավորապես հրաշունչ և մամուլի ու հրապարակախոսի իրավունքները հենց ազգային գործիչներից վեհապես պաշտպանող «Ազգային թշվառության» մեջ (հ. 3, էջ 103—115)։ Ուստի և այստեղ կանգ առնենք երկու բնորոշ օրինակի վրա։

Գտնվելով Կ. Պոլսում, Նալբանդյանը տեղեկացավ այն արտառոց ոճրագործություններին, որ գործել է Վանցի Պողոս վարդապետը։ Մի շարք նյութերով «Մեղուն» մերկացրեց վարդապետին և պահանջեց նրան զրկել եկեղեցական կոչումից։ Չնայած Վանցի Պողոսի քրեական հանցագործություններն անհերքելի էին, հանձին Հովհ. Զամուռճյանի գտնվեցին պաշտպաններ, իսկ պատրիարքարանը վճռական միջոցների չէր դիմում։ Եվ ահա «Մեղուն» դիմեց արտառոց քայլի՝ հրավիրեց ընթերցողներին արտահայտվել իր վճռի մասին, այլ խոսքով դիմեց հասարակության օգնությանը։ Առաջիններից մեկն արձագանքելով թերթին, Նալբանդյանը «Մեղվի» հաջորդ՝ 1860 թ. դեկտեմբերի 20-ի համարում հանդես եկավ «Նամակ «Մեղուի» խմբագրին» (հ. 2, էջ 302—306) հոդվածով՝ լիովին ու մարտունակությամբ պաշտպանելով թերթի դիրքը։

Բայց հարցը միայն պաշտպանությունը չէր. Նալբանդյանը համակրանքով արձանագրելով, որ «հայոց ազգի մեջ դեռ առաջին անգամն է, որ մի օրագիր, յուր վճիռը հրապարակելով, խնդրում է բանավոր հասարակության կարծիքը», առաջ քաշեց մամուլի համար չափազանց կարևոր մի նոր սկզբունք։ «Անպատմելի ուրախ ենք այս բանի վերա,—գրել է նա,—մեք այստեղ տեսնում ենք մի փրկարար սկզբունք, այն է հանդես տալ ազգի կարծիքին, ուրեմն հրապարակ կանչել խելքերը, խոստովանել նորս։ իրավունքը և

այս կերպով ուսուցանել, որ ազգի մեջ երևեցած ամեն մի երևույթ, ամեն մի իրողություն վերաբերություն ունի ազգին, և ազգի անդամքը... ամենայն մարդկային իրավունքով աղատ են այդ բանը ընդունել կամ մերժել, արդարացնել կամ պարսավել»։

«Թող ապրի՛ հրապարակախոսությունը»,— հռչակում է Նալբանդյանը և ապա բանաձևում. «Ազգի պակասությունը խոստովանել կամ դատապարտել ոչ թե միայն հանցանք չէ, այլ առաքինություն։ Ամենայն ազգային անգամ,— շարունակում է նա,— ինչ չափով պարտական է սիրել յուր ազգը, նույն չափով պարտակա՛ն է նշավակել և սպանել նորա պակասությունքը, որպեսզի ազգությունը, ավելի մաքուր շրջանակի մեջ հանդիսանա ընդհանուր մարդկության առաջև»։

Լիովին համերաշխ լինելով «Մեղվի» հետ, Նալբանդյանն, այսպիսով, հայ մամուլին մատնացույց էր անում նրա հռչակած «փրկարար սկզբունքը». որ պետք է դրվի ամեն մի առաջադիմական-դեմոկրատական պարբերականի իրական գործունեության հիմքում։ Հայ մամուլը պետք է ընդօրինակի «Մեղվին»,— ուսուցում էր նա։ Ավելին. Նալբանդյանն իբրև բացառություն իր գրական ստեղծագործության մեջ հատուկ «Ուղերձ» հղեց առ Մեխիթեր-Սրվանձյանը՝ փառաբանելով նրա գործունեությունը, նաև ուրվագծելով հրապարակախոսի իրական կերպարը՝ նույնպես արժանի ընդօրինակման, սիրո և օրհնանքի.

Ո՛վ հոգաց, ո՛վ վազեց լսել ազգի հոնչյուն,
Ո՛վ ներկա նորա մոտ, երբ փչում էր նա հոգին։
Ո՛վ սրբեց նեղվածի արտասուք աչքերից,
Ո՛վ ողբաց, բողոքեց, երբ խլեցին հաց որբից։
Քնած էր ամիրան, աչք փակած և դիտող,
Ի ժամու, տարաժամ դու եղար միայն օգնող (հ. 1, էջ 100)։

Գրեթե նույնքան ջերմ ու համակրական է Նալբանդյանի վերաբերմունքը ականավոր հրապարակախոս Ստ. Ոսկանյանի և նրա հրատարակած դեմոկրատական «Արևմուտք» հանդեսի նկատմամբ։ Նա ողջունում է «Արևմուտքի» հրատարակությունը, ստանձնում է նրա գործակալությունը Ռուսաստանում, «առ ի սրտե հրապարակական» շնորհակալությամբ է վարձատրում հանդեսին, նրա գիտնական խմբագրին, որ «ունի բանաստեղծական ճոխ քանքար», համերաշխվում է նրա բողոքին ընդդեմ ինքնակոչ երեսփոխանների, ցասումով դատապարտում է «Արևմուտքի» դեմ հարուցվող թշնամանքը և Ոսկանյանի նախորդ հանդեսի՝ «Արևելքի» դարանագործությամբ խափանելը, դրվատում է «ազատախոս հեղինակի» գործունեությունը, մերկացնում է արեղայական հալածանքները ճշմարտության օրգանի հանդեպ։ Արտասահմանում գտնվելով, Նալբանդյանը մտերմություն էր հաստատել Ստ. Ոսկանյանի հետ, մոտիկից ծանոթացել «Արևմուտքին», նպատակ ուներ նրա համարները հավաքել ու հետը բերել, առանձին համարներ Փարիզից ուղարկել է Ռուսաստան՝ իր բարեկամներին ու մերձավորներին, իսկ Պետերբուրգ վերադառնալով՝ հատուկ նամակ է հղել «Արևմուտքին»՝ ստանձնելով նրա պաշտպանությունը չդադարող հալածանքներից՝ «քաջալերություն և համակրու-

թյուն» տալով հրատարակողներին[1]։ «Մեք շուտով մանրամասն կխոսենք Արևմուտքի մասին»,— երկրորդ անգամ խոստանում էր Նալբանդյանը։ Ցավոք նա չի կարողացել իրագործել իր ծրագիրը, պահպանվել են լոկ ծոցատետրի «գրելիք» նշումները՝ ապագա հոդվածի ծրագիրը, բավական լայն ու խոսուն։

Մեծ հրապարակախոսի, հեղափոխական-դեմոկրատի այդչափ սրտամոտությունը «Մեղուի» և «Արևմուտքի» ու նրա դեմոկրատ-հրապարակախոս-խմբագիրների նկատմամբ, որով, ի դեպ, պայմանավորված է «Հյուսիսափայլ»—«Մեղու»—«Արևմուտք» խոստումնալի գործակցությունը, տոգորված էր նրա մեծ մտահոգությամբ՝ զարկ տալ հայ դեմոկրատական մամուլին ու հրապարակախոսությանը, ծրագրային մի խնդիր, որ Նալբանդյանին մասամբ միայն հաջողվեց իրագործել։

Այստեղ հնարավոր եղավ անդրադառնալ հայ մամուլի և հրապարակախոսության Նալբանդյանական մի քանի ըմբռնումներին միայն։ Թեման, անշուշտ, արժանի է ավելի հանգամանալի լուսաբանության, որ հնարավոր է Նալբանդյանի ամբողջ գրավոր ժառանգության մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո։ Արդեն ասվածին միայն ավելացնենք հետևյալը. մամուլի և հրապարակախոսության դերի և խնդիրների քննությանը Նալբանդյանը մտադիր էր նվիրել նաև առանձնահատուկ ուսումնասիրություն։ Նալբանդյանի «Ծոցատետրի նկատողություններում», որպես «գրելիք», հանդիպում է այսպիսի գրառում. «օրագիրների ներկա վիճակը։ Նոցա ինչպես լինելու պարտականությունը» (հ. 4, էջ 275)։ Լոկ այս գրառումն արդեն ցույց է տալիս, որ Նալբանդյանը մտադիր էր ընդարձակորեն անդրադառնալ հայ մամուլի ընդհանուր վիճակին և, որ առավել կարևոր է, շարադրել պարբերական հրատարակության խնդիրներն՝ իր ըմբռնմամբ։ Անշուշտ, դա լինելու էր նրա արժեքավոր երկերից մեկը, որ ամփոփելու էր իր գրեթե տասնամյա փորձն ու աշխատակցությունը մամուլին, լինելու էր ժուռնալիստական ու հրապարակախոսական մի բեղուն գործունեության հանրագումարը։ Ցավոք, ինչպես ենթադրում են Մ. Նալբանդյանի երկերը ծանոթագրողները, «վերահաս իրաղարձությունները զրկեցին» Նալբանդյանին դեռևս 1860 թ. գարնանը ծրագրածը իրագործելու հնարավորությունից։

Սակայն մեզ թվում է, որ այդ ծրագրի հետ ուղղակի առնչություն ունի Նալբանդյանի մեզ հասած այն ինքնագիրը, որ կրում է «Երկու խոսք, թե ինչպես է մեր հայացքը մի օրագրի պաշտոնակատարության մասին» (հ. 2, էջ 395—403) խորագիրը, թեև նրա գրության հավանական թվականը համարվում է 1864-ը։ Հավանական է ենթադրել, որ այն գրվել է բանտում և հեղինակի գրչին պատկանող վերջին գործերից մեկն է, եթե ոչ վերջինը, որ, ցավոք, մեր կարծիքով մնացել է կիսատ կամ մեզ հասել միայն նրա առաջին մասը։ Անկախ այդ ամենից ձեռագիրը վկայում է, որ Նալբանդյանը ձեռք է զարկել հայ մամուլի խնդիրներին նվիրված լայն ընդգրկումով ուսումնասիրություն գրելու գործին, գրել է նրա առաջին հատվածը, որից և հայտնի է դառնում նրա հետաքրքրության շրջանակը։

Նալբանդյանի խոսքը, ինչպես գրում է հենց առաջին տողերում, վերաբերելու էր ոչ թե, այսպես ասած, ճյուղային-մասնագիտական մամուլին.

[1] Այս առթիվ տե՛ս Մ. Նալբանդյան, Երկ, հ. 1, էջ 297, 410, 429—430, 438—439, 451, հ. 4, էջ 62, 275, 276 և «Արևմուտք», 1859, էջ 185—186։

այլ նրանց, որոնք «գնում են կամ ուզում են գնալ միջին ճանփով, ընդհանրապես»։ Ազգի վիճակը հնարտվորություն լի տալիս մասնագիտական պարբերականներ ստեղծելու և պահպանելու։ Ուստի և նա նպատակ ունի քննելու այն հարցը, թե «ինչպես պիտի լիներ ինքը իրեն» հայ մամուլը. կարեոր մի հարց, որը եթե չենք սխալվում, միայն Նալբանդյանին է լրջորեն զբաղեցրել։ Ըստ որում նա խնդրով զբաղվում էր այն ելակետից, որ շարունակ խոսվում էր այն մասին, թե «ինչպես շպիտի լիներ» այս կամ այն օրակիրը, քննադատական դիտողություններ էին արվում «Հյուսիսափայլի» շուրջը և հենց իր՝ Նալբանդյանի հասցեին՝ առանց, սակայն, ցույց տալու, թե ինչպիսին պետք է լինի պարբերականը, թե ինչպես պետք է գրել։

Նպատակ ունենալով պատասխանել այդ դիտողություններին, որ Նալբանդյանը համարում է «հանցանքներ», նա առանձնացրել է մամուլի դրվածքին վերաբերող երեք կարեոր հարց՝ ա) լեզուն, բ) նյութերի ընտրությունը, գ) ազգային նյութեր չունենալը։ Այս երեք արմատական հարցերի քննությամբ Նալբանդյանն անկասկած երեան կհաներ պարբերական հրատարակության դիմագծի իր ըմբռնումների համայնապատկերը։ Առաջին հարցի համակողմանի և նալբանդյանական անաչառ քննությունը ցույց է տալիս, որ սկսված ուսումնասիրությանը վիճակված էր լինելու հայ մամուլի տեսական հարցերին նվիրված անդրանիկ գործը։ Սակայն ձեռագիրը, դժբախտաբար, ընդհատվում է հենց պարբերականի լեզվի հարցերի քննությամբ։

Մեր մամուլի ու հրապարակախոսության մեծ երախտավորը, այսպիսով, իր ժրաջան գործունեության հետ միատեղ տեսականորեն քննել է հայ մամուլի խնդիրները, առաջադրել, հիմնավորել ու պաշպանել սկզբունքներ, որոնք նպաստել են հայ առաջադիմական—դեմոկրատական մամուլի լինելությանը։ Նա ըստ էության հայ մամուլի ու հրապարակախոսության հարցերի առաջին տեսաբանն էր։

М. НАЛБАНДЯН О ЗНАЧЕНИИ ПЕЧАТИ И ПУБЛИЦИСТИКИ

МИКАЕЛ АКОПЯН

Резюме

Революционер-демократ М. Налбандян в своих сочинениях важное значение придавал вопросам армянской печати и публицистики, их роли в общественной жизни; он неустанно боролся за утверждение передовых принципов в армянской печати. К вопросам роли и значения печати и публицистики в жизни народа он обращался неоднократно: он развивал и защищал те принципы, которые фактически легли в основу армянской прогрессивной печати в течение второй половины XIX в. По существу, М. Налбандян положил начало разработке теоретических вопросов армянской печати и публицистики в период их становления.